797

281·6
Ц-81

๑ ก๑๑ ก

203.4
Դ-23

№ 8

ՀԱՇԻ

ԵՐԵՒԱՆԱՅ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ-ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1908 ԹՈՒԻ

ԵՐԵՅՓՈԽ ԴՄԻՏՐԻ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՊԱՊՈՎ

72
1
2001

1909
Երեւան. Տպարան Էմին Տէր-Գրիգորեանի
ЭРИВАНЬ. СКОРОПЕЧАТНЯ ЭМИНА ТЕРЪ-ГРИГОРЯНЦА.

281.6
Ա-81
370
Զ131-ՀԱ
28
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/31 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

№ 8

ՀԱՅԵՐԻ

ԵՐԵՒԱՆԱՅ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ-ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1908 ԹՈՒԻ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ Հ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОСУДАРСТВ. ГАЗЕТЫ „МЕГЕРЕ" ТИФЛИСЪ.
430

ԵՐԵՑՓՈԽ ԳՈՒՅՏԻ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՊԱՊՈՎ

1909
Երևան. Տպարան Էմին Տեր-Գրիգորեանի
ЭРИВАНЬ. СКОРОПЕЧАТНЯ ЭМИНА ТЕРЪ-ГРИГОРЯНЦА.

40879-ակ.

23644-60

Հասարակութեան շնորհակալութեան արձանագրութիւնը ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ երեցփոխ Դիմիտրի Պապովին:

14 Դեկտեմբերի 1909 ամի Երևան:

ՊԱՏՃԷՆ:

Երևանի Հայոց վիճակային Կոնսիստորիային:

...Ժողովը ի նկատի ունենալով երեցփոխ պ. Դիմիտրի Միքայէլեան Պապովի ինամեայ անդուլ և իւր պարտուց սրբութեամբ ծառայելը քաղաքիս ս. Լուսաւորիչ եկեղեցուն, որոշեց՝ յայտնել նրան իւր ի սրտէ շնորհակալութիւնը. բացի այս՝ խնդրել ժողովրդական համախօսականով ազազայ Ամենայն Հայոց Կաթողիկոսից նրան խրախուսելու իր օրհնութեան սրբատառ Կոնդակով. միևնոյն ժամանակ պ. Պապովեանցի ցուցակ ծառայութեանը ներկայացնելով հոգևոր իշխանութեան՝ նրա միջոցով խնդրել քաղաքական իշխանութիւնից ըստ օրինի վարձատրելու պ. Պապովին Կայսերական շքանշանով ի քաջալերութիւն և ի խրախոյս նրա ինամեայ եռանդուն ծառայութեան: Այս բոլորից յետոյ, Ժողովը եկաւ այն եզրակացութեան թէ, որով-

հետև պ. Դիմիտրի Պապովը արդիւնաւոր և օգտակար ծառայող է եղել ս. Լուսաւորիչ եկեղեցու բարեգործութեան վերաբերութեամբ և ի նկատի ունենալով, որ այդ եկեղեցին դեռ ևս կարօտութիւն ունի և ապագայ բարեգործութեան, ուստի և որոշեց վերստին խնդրել պ. Դ. Պապովեանին նորից յանձն առնել երեցփոխանական պաշտօնը, որի համար ժողովը ընդունում է միաձայն, իբրև մի անփոխարինելի անձնաւորութիւն այդ պաշտօնի համար. իսկ հոգաբարձական պաշտօնի համար ձայնից բացարձակ առաւելութեամբ ընտրուեցին պ. պ. Պետրոս Յովհաննիսեան, Աղաջան Արշակունի և Մահտեսի Ն. Գէորգեան։

Ստորագրութիւնք։

ՄՈՒՏՔ ՄՈՄԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆԻՑ.

1908 ԱՄԻ ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԻ 12-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ 1909 ԱՄԻ ՄՈՄԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆԻՑ ՍՏԱՑՈՒԵԼԻ 759 Ր. 59 Կ.

Մուտք ջահեր վառելուց.

Գ. Յարութիւնեանի թաղմանը 1 մեծ ջահ .	3 ր.
պ. Յարութիւն Թարվէրդեանի հարսի թաղմանը	2 —
պ. Ներսէս Գէորգեանի պսակին մի ջահ . .	2 —
պ. Յովհաննէս Վարդանեանի պսակին . .	2 —
Տիկին Սավիչի հոգեհանգստեանը 1 ջահ . .	3 —
3 ջահ Գիմնազիայի Ա և Գ դասարանի աշակերտաց հաղորդութեան առթիւ . . .	6 —
Օրիորդ Փառանձէմ Առաքելեանի թաղմանը 1 ջահ	2 —
Օրիորդաց Գրօգիմնազիայի աշակերտուհեաց հաղորդութեան առթիւ 2 ջահ . . .	4 —
4 ջահ հանգուցեալ Տիգրան Աշամեանի թաղմանը	9 —
Աննա Խանդեանի թաղմանը 2 ջահ . .	5 —
պ. Գէորգ Գէօղալեանի ամուսնոյ թաղմանը 1 ջահ	3 —
1 ջահ խաչեղբայր Մ. Ազիզեանից . .	2 —
2 ջահ Տիգրան Տէր-Աբրահամեանի թաղմանը .	3 —
2 ջահ հանգուցեալ Սեդրակ Ազիզեանի թաղմանը	5 —
Գումարն է .	51 ր.

Մուտք մկրտութեանց լուսագներից.

Խաչի քաւոր պ. Տիգրան Քոչարովից .	5 ր.
Պարիկմախէր պ. Խաչատուր Յարութիւնեանից	20 կ.
պ. Գրիգոր Յարութիւնեանից . .	20 կ.
պ. Տիգրան Աղամեանից . . .	30 կ.
պ. Արշակ Յակոբեանից . . .	50 կ.
պ. Կարապետ Յարութիւնեանից . .	30 կ.

Նորբայ Տէր Յակոբի միջոցաւ . . .	20 կ.
Տէր Զրթանէսի միջոցաւ . . .	25 կ.
Քոչարեանց Նիկոլայից՝ մկրտութեան .	1 ր.
պ. Մելքոն Աղամջանեանից . . .	50 կ.
Տէր-Ղևոնդի ձեռամբ	30 կ.
պ. Մանուկ Նախաշիրաբեանից . .	1 ր.
Տէր-Ղևոնդի ձեռամբ	30 կ.
պ. Մատթէոս Նազարեանից . . .	30 կ.
— Արմենակ Աֆրիկեանից . . .	1 ր.
— Մկրտիչ Մուսինեանցից, Տ.-Ղևոնդի ձեռամբ	1 ր.
— Երուանդ Մովսէսեանից . . .	50 կ.
— Կարապետ Աֆրիկեանից . . .	3 ր.
— Գէորգ Եդիկեարեանից . . .	50 կ.
— Լևոնիդ Տէր-Յովհաննէսեանից . .	50 կ.
— Գեորգի Սկանդարեանից . . .	20 կ.
— Յարութիւն Տէր-Յովհաննէսեանից .	50 կ.
— Հմայեակ Աղատեանից . . .	1 ր.
— Խաչատուր Արզումանեանից . .	75 կ.
— Ալէքսանդր Յակոբովից . . .	40 կ.
— Ալէքսանդր Յակովբեանից . . .	50 կ.
— Մկրտիչ Ներսէսեանից . . .	50 կ.
— Թորգոմ Թադէոսեանից . . .	1 ր.
	832 ր. 49 կ.

Լուսագին տօներից.

1. Լուսագին Ծննդեան տօնին 2. և յոգուտ աղքատաց	օգնում էին պպ. Նիկոլայ Գէորգեան և Մարտ. Բաղալեան.
	46 ր. 5 կ. եկեղեցուն
	46 ր. 5 կ. աղքատաց
3. Համբարձում Մալխասեանից .	50 կ.
4. Զատկական մատաղի և աղքատաց .	132 ր.

Լուսագին պսակներից.

1. Տէր-Անդրանիկի միջոցաւ . . .	50 կ.
2. Ներսէս Գէորգեանի պսակին . . .	1 ր.
3. Հայրապետ Աւագեանի պսակին . .	60 կ.
4. Յովհաննէս Մինասեանի պսակին . .	1 ր.
5. Տէր-Ղևոնդի միջոցաւ . . .	50 կ.
6. Տէր-Ղևոնդի միջոցաւ . . .	1 ր.
7. Խաչ-եղբայր Մ. Ազիզեանից . . .	1 ր.
8. Պարոն Բէկ Եւխանեանցից . . .	50 կ.
9. Դաւիթ Ղարիբեանցից . . .	50 կ.
10. Տէր Զաքարի միջոցաւ . . .	50 կ.

Լուսագին թաղումներից.

1. Յարութիւնեանի թաղմանը 1 մեծ ջահ	2 ր.
2. Յարութիւն Թարվէրդեանի հարսի թաղմանը	1 ր.
3. Օր. Փառանձէմ Աւաքելեանի թաղմանը	50 կ.
4. Տիգրան Աշամեանցի թաղմանը .	2 ր.
5. Գէորգ Գէոզալեանցից . . .	1 ր.
6. Արշալույս Քոչարեանցի թաղմանը .	1 ր.
7. Սառա Բարայեանցի թաղմանը .	50 կ.
8. Սեդրակ Ազիզեանցի թաղմանը .	1 ր.
9. Ոմն Յովհաննէսի թաղմանը . .	50 կ.

Լուսագին հոգեհանգստեան.

1. Հանգուցեալ Տիկին Սաւիչի տարեդարձի հոգեհանգստեանը . . .	1 ր.

Կալուածքներից եւ այլ աղբիւրներից.

1.	Եկեղեցապատկան տան վարձու Բ տրէան	17 ր. 50 կ.
2.	պ. Մկ. Ջանփոլադեանցից Դոնաբացէքին	5 ր.
3.	Կապալառու այգեաց պ. Գասպար Գէորգովից առաջին կէս տարւայ վարձ	27 ր. 50 կ.
4.	Յօգուտ եկեղեցւոյ 3 դրամարկղից	1 ր. 90 կ.
5.	Յօգուտ աղքատաց 2 դրամարկղից (ի ներկայութեան պ. Ն. Գէորգեանի և դպիր Սահակայ)	50 կ.
6.	Քսան հատ ադիւս ծախուեց պ. Բագրատին	50 կ.
7.	Եկեղեցապատկան տան վարձու Բ տրէան	17 ր. 50 կ.
8.	Այգեաց կապալառու Գասպար Գէորգովից երկրորդ կէս տարւայ վճար	27 ր. 50 կ.
9.	Պ. Համբարձում Մալխասեանից	15 ր.

Մուտքը ընդամենն եղել է 1908 թ. ընթացքում 1140 ր. 54 կ.

Նուիրաբերութիւններ.

1. Պ. Նախշիքեարեանց բրօնզով ծածկեց շուշապատ 2 դռների փայտեայ խաչերը ձրի։
2. Պ. Կոստանտին Եգորիչ Կամսարական նուիրեց մի չինարի ծառ։
3. Պ. Խաչատուր Մէլիքեանց նուիրեց մի ակացիայի ծառ
4. Պ. Պավէլ Գրիգորիչ Կանդուրալեանց նուիրեց 30 հատ ակացիայի ծառ։

ԾԱԽՔ։

Առնուած է ընդամենն 237 ֆ.—5 փ. 37 ֆ. մոմ

150-ցից *)	(զոյգը 5 կոպ.)	2 փ.	20 ֆ.
120-ցից	(զոյգը 5 կոպ.)		10 ֆ.
80-ցից	(հատը 5 կոպ.)	1 փ.	35 ֆ.
50-ցից	(հատը 10 կոպ.)		20 ֆ.
24-ցից	(ջահերի համար)		6 ֆ.
16 և 12-ցից	(ջահերի համար)		26 ֆ.
		5 փ.	37 ֆ.—283 ր. 20 կ.

Ուղարկել էինք 16 ֆ. կոճատ մոմ Ալեքսանդրապոլ և նրա տեղ ստացել ենք առայժմ 8 ֆ. տեղ՝ 4 ֆ. որ և ծախուել է 16 ռուբ.

Մեր հաշուով մոմավաճառութիւնից պիտի ստացած լինէինք մօտ 820 ր. մինչդեռ մոմը ծախուել է 759 ռուբ. 59 կ. պակասում է 50—60 ր. չափ մօտաւորապէս։

Ռոճիկ եկեղեցւոյ պաշտօնեից Յունուարի 1-ից մինչեւ Դեկտեմբեր ամսի վերջը.

Տէր-Գրիգոր Սուքիասեանցին յունուար, փետրուար, մարտ և ապրիլ ամիսների	48 ր.
Տէր-Ռափայէլ Ռուբինեանցին յունուար, փետրուար և մարտ ամիսների	36 ր.
Տէր-Ղևոնդ Աթանասեանին ապրիլ, մայիս և յունիս ամիսների	30 ր.
Տիրացու Սահակ Մխիթարեանցին ամբողջ տարւան	180 ր.
Տիրացու Մնաց. Կարապետեանին ամբողջ տարւան	132 ր.
Ընդամենն	426 ր.

*) Ասելով մոմը 150-ց, կամ 80-ց, կամ 50-ց պէտք է հասկանալ որ մի ֆունտ մոմի մէջ գտնւում է մօտաւորապէս մինչի 150 հատ մոմ, կամ 80 հատ մոմ, կամ 50 հատ մոմ և այլն։

Աղքատաց բաժանուել է . . .	46 ր. 10 կ.
1 ֆ. կնարուկ Բաբասովից . . .	1 ր. 90 կ.
Եկեղեցւոյ դռան ապակի . . .	1 ր. 60 կ.
Եկեղեցւոյ դռան մեծ ապակի և մի փոքր	2 ր. 40 կ.
2 վիվեսկայ բակի դռների համար . .	5 ր. —
Տէր-Գրիգորի սուրճար կարելու . .	3 ր. —
Սուրճարի համար 12½ արշին խաս և 13 արշին աստառ	21 ր. 72 կ.
Մի զոյգ արծաթեայ կոճակ փիրոնի (8 մսխալ)	2 ր. —
6 ֆ. խունկ	1 ր. 80 կ.
„Արարատ“ ամսագրին . . .	4 ր. —
4 թերթ „Դանիէլի“	— 60 կ.

½ սաժէն վառելափայտ Խ. Մելիքեանից .	19 ր. —
6 փութ ածուխ	3 ր. 65 կ.
10 շապիկ լուանալու	1 ր. —
2½ փութ սպիտակ ալիւր նշխարքի համար	8 ր. 40 կ.
Նախշիքեարովին դռան ապակի դնելու .	1 ր. 60 կ.
Գործակալին 1908 թ. մատեանների գինը	4 ր. 50 կ.
4 ֆ. կարագ	2 ր. —
3 շաբրի	— 67 կ.
Տէր-Ղեոնդին հրաւիրաթղթեր ապել տալու	3 ր. —

Մաշադի Նայիբին 2 սաժէն հողի գինը .	16 ր. —
19 սաժ. պատ շարելու վարձ վարպետ Դաբրիէլին	38 ր. —
Դարվազների քարերը քանդելու և նորից շինելու	2 ր. 50 կ.
Աւագին՝ թուրքին	1 ր. —
7 փութ 10 ֆ. կիր ճարակեանցին .	2 ր. 42 կ.
51 կոտ հող (¾ արշինանոց) . .	6 ր. 50 կ.
Երեք դռան պաշինկի Մկրտիչ սկեսարին .	6 ր. —

1000 ծրար Յովհաննիսեանից (լուսագ. ժողովելու	2 ր. 80 կ.
1000 ծրար և 100 հրաւիրաթերթ լուսագ. տպագրելու	7 ր. 25 կ.
240 հաշուառեար տպելու . . .	33 ր. —
Ծխականների անուանացուցակ տպելու .	4 ր. —
Փողոցի առուներ և մայթեր ուղղելու .	10 ր. 40 կ.
Մի դրամարկղ մավթուլեայ . . .	1 ր. 50 կ.
Պողոսովի հայաթից խիճ ածելու մայթերի վրայ՝ թուրքին	— 50 կ.
Տէր-Ղեոնդի ծխականների ցուցակ տպելու	4 ր. —
Միրոյի պասրէդնիկի պավէսակի համաձայն Զէնգաւիթ գնալու՝ ֆայէտոնին .	2 ր. —
Քաղաքային տան հարկ . . .	2 ր. 46 կ.

Վճարած պարտքեր.

պ. Նիկոլայ Գէորգովին . . .	25 ր. —
պ. Անդրիաս Աստուածատրեանցին .	25 ր. —
տ. Աննա Արազովին	50 ր. —
պ. Համբարձում Մալխասեանին . .	15 ր. —
պ. Յովհաննէս Քոչարեանցին . .	15 ր. —

Ելք եղել է 1908 թ. ընթացքում ընդամենն 1113 ր. 47 կ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՇՈՒՇՏԵՍՆԵՐԻ։

1909 թ. Յունուարի 23-ին. Երևան։

Մենք ներքոյ ստորագրեալներս զննեցինք Երևանայ Ս. Լուսաւորիչ մայր-եկեղեցւոյ 1908 թուի ելից և մտից հաշուեմատեանը, որից երևաց, որ պ. Եղեցփոխ Դիմիտրի Պապովի ձեռքով ընդհանուր մուտք եղել է 1140 ռուբ. 54 կ., իսկ ծախք եղել է 1113 ռուբ. 47 կոպ., որը հանելով մուտքի գումարէն առ մէկն Յունուարի 1909 թ. մնում է կանխիկ դրամ 27 ռ. 7 կ.

1908 թուականին եկեղեցին պարտք է ունեցել 786 ռ. 55 կ. վճարուած է 130 ռ. և դուրս գալով 1908 թ. աւելորդ գումարն 27 ռ. 7 կ. առ 1-ն Յունուարի 1909 ամի եկեղեցին մնում է վճարելու 629 ռուբ. 48 կոպ.

Հոգաբարձուք { Աղաջան Արշակոնի
Պետրոս Յովհաննիսեան

ՄԻ ՔԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ։

Ամեն մի եկեղեցի կառավարում, պահում-պահպանում է. ա) իւր ծխականների յօժարակամ նուիրաբերութիւններով և բ) եկեղեցապատկան կալուածքներից ստացած եկամուտներով, օր այգիներից, վարելահողերից, անտառներից, խանութներից, ջրաղացներից և այլն։

Ս. Լուսաւորիչ եկեղեցին օծելուց յետոյ Կոնսիստորը ինձ տուել էր մի մատեան, որի մէջ պիտի գրէին իւրաքանչիւրական ձեռքով այն պարտները, որոնք ցանկութիւն ունէին ս. Լուսաւորչայ ծուխ դառնալու, նշանակելով հանդերձ իւրաքանչիւր ծխական քահանան (անունը)։ Իսկ երբ այդ ծխականների թիւը հասնէր 200-300-ի, ժողով կոչցնել և մի զարգացած ուսումնասիրաբար քահանայ ձեռնադրել տալ առանձնապէս եկեղեցւոյ համար։ Այդ պատճառով էլ անորոշ ժամանակով նշանակուել էին օգնական քահանաներ՝ Գ. ա. ք. Սուքիասեանց և Գարեգին ք. Խաչատրեանց։ (Բացի վերոյիշեալ քահանաներից եկեղեցում պաշտօնավարել են մէկը միւսից յետոյ՝ Մկրտիչ վարդապետ Թադէոսեան, Գրիգոր ա. ք. Աւագեանց, Գէորգ ք. Միրիմանեանց, Ռափայել ք. Ռուբինեանց և Դաւիթ ք. Աթանասեանց։

Մինչև այսօր եկեղեցւոյ մատեանում գրուել են ծխական մօտ 120 հոգի՝ զանազան եկեղեցիների ծխականներից, որոնցից շատերը յետ են քաշուել։

Գրիգոր ա. ք. Սուքիասեանցի ծխականների թիւը այդ մատեանում հասնում էր 97-ի, որոնցից բաւորդը արդէն հեռացել է Տ.-Գրիգորի ծխութիւնից։ Մի ուրիշ մասը կենում է Հորագեղում, որը խակապէս Տ.-Գրիգորի ծուխ է համարւում, բայց ոչ ս. Լուսաւորչի. մի մեծ մասն էլ կազմում է բանուոր ազգաս ծխականների գաստակարգ, որը նիւթապէս ոչ մի օգուտ չի տալիս եկեղեցուն, ինչպէս երևում է ամեն տարուայ հաշուեմատեաններից. մնում է 5-10

ծուխ, որ տարեկան կարողանում է վճարել 4-5 ր. (Զատկին և Ծննդեան) լուսագին, մատաղագին և յօգուտ աղքատաց, կամ եկեղեցուց մօտիկ լինելով՝ կարողանում է շուտշուտ յաճախել ժամասացութեանց։ Ուրեմն այն ահագին եկամուտը, որ ստանում էր ս. Լուսաւորիչ եկեղեցին և ստացած եկամուտներից օգտւում էին քահանաներն ևս, ստանալով ամսական 10-12 ր.—ստացւում էր ժամաւոր աղօթողներից, որոնք մօտիկութեան պատճառով շարունակ յաճախում էին եկեղեցին և որոնց ս. զգացմունքը շարաչար վիրաւորեցին եկեղեցւոյս քահանաները և պատճառ դառան այդ ժամաւորներին այլ ևս մեր եկեղեցի չգալու, ինչպէս՝ կ՚տեսնենք մի քիչ ներքև։

Կալուածքներից եկեղեցին ունի մի փոքրիկ տուն, որը տարեկան բերում է 35 ր. և մի այգի Շէնգաւթում—տարեկան 55 ր. դուրս գալով թէ թագաւորական հարկեր և այլ ծախսերը՝ մնում է զուտ եկամուտ 70-75 բուր.։ Մի չնչին գրամ։

Որպէս զի եկեղեցւոյ ծուխը շատացրած լինէի՝ ես միշտ դիմում էի քահանաներին գտնէ իւրեանց ծուխով տեղափոխել ս. Լուսաւորիչ, բայց ոչ օրին չէր յաջողւում՝ ծուխը ամբողջովին չէր համաձայնւում։ Զևոնդ ա. ք. Աթանասեանցը խոստացաւ իւր ամբողջ ծուխով տեղափոխել ս. Լուսաւորիչը և եթէ միշտ ներկայ գտնուէր ժամասացութեանց, մենք էլ հոգաբարձութեան հետ խոստանում էինք ամսական 10-12 ր. վճարել գանձանակագրամ, իսկ հակառակ դէպքում կրկնապատիկ դուրս գալ վճարելիք ռոճիկից։

Տ.-Զևոնդ հայրը պայմանագանց գտնուց երկու դէպքումն էլ՝ ոչ էլ նրա ծուխը ցանկանում է (ահա երկրորդ տարին է) հեռանալ ս. Սարգսից*) և ոչ էլ ինքը յաճախում

*) 1908 թ. Զատկին և յոյն 1909 թ. Ծննդեան և Զատկին մեր ուղարկած հրաւիրագրերին վճարել լուսագին, մատաղագին և յօգուտ աղքատաց, Զևոնդ ա. ք. Աթանասեանցի ծխականները պատասխանեցին—«մենք ս. Սարգսայ ծխականներ ենք և ոչ Լուսաւորչայ» և ոչինչ էլ չտուին բացի 4-5 հոգուց։

է ժամասացութեանց, իսկ ամսականները պահանջում է սպառնալիքներով։ Իսկ մեր բողոքները, թէ ինչ իրաւունքով Կոնսիստորը հաստատեց Տ.-Զևոնդին ս. Լուսաւորչում առանց Տ.-Զևոնդի ծուխի հաւանութեան, կամ թէ ինչու քահանան ժամ չպիտի տայ ամեն օր, կամ թէ վայել է պարտաղանց քահանային առանց մի փոստի սանձարձակ լեզուով անպատկառ նամակներ գրել ինձ և այլն, այս բոլորին թէ Կոնսիստորը և թէ Սինոդը պատասխանում են խորին լռութեամբ.... Թող հասարակութիւնը դատի՝ Տէր-Գրիգոր-Տէր-Զևոնդն է մեղաւոր, թէ Կոնսիստոր-Սինոդը։

Ս. Լուսաւորիչ եկեղեցին, չնայած որ ոչ ծուխ ունի և ոչ կալուածք, շարունակ պահւում էր իր օրինաւոր կարգապահութեամբ, պայծառութեամբ և շքեղութեամբ, որ իրրև կենդրոնական մայր-եկեղեցի գրաւում էր բոլորի ուշադրութիւնը և եկեղեցին միշտ լիքն էր լինում աղօթողներով. մոմավաճառութիւնն էլ փայլուն էր, որովհետև Երևանցիների մեծամտութիւնը միշտ շտապում էր ս. Լուսաւորիչ թէ ս. հաղորդութիւն ընդունելիս, թէ երեխայ մկրտելիս, թէ պսակելիս, թէ հանդուցեալին եկեղեցի դնելիս և այլն։

Բայց ահա երրորդ տարին է, ինչ որ մեր եկեղեցում վերջ է դրւել թէ կարգապահութեան և թէ կանոնաւոր ժամասացութեան։ 1908 թ. ընթացքում շատ անգամ (շաբաթական 4-5 անգամ) առաւօտեան կամ երեկոյեան ժամասացութիւններ չէին լինում, հասարակ տօն օրերին, կամ կիրակի օրերը. մինչև անգամ Մեռելոցներին, Աւետման, Տեառնընդառաջին, Համբարձման, Լուսաւորչայ ծնունդին պատարագներ չեն եղել, նախատօնակ՝ նոյնպէս։ Ժամասացութիւնն էլ քէֆն ուզած ժամանակ սկսում կամ վերջացնում էին*)։ Ժամաւորները նեղացած դադարեցին մեր եկեղեցի յաճախելուց, մանաւանդ մի քանիսներն էլ մի ուրիշ յարգելի պատճառներ ունէին ևս առաւել նեղանալու, երբ նրանց խնդիրը մերժւում էր քահանայի կողմ-

*) Բայց գաղափար կազմելու համար, թէ ինչ ձևով է կատարւում ժամասացութիւնը՝ հարկաւոր է անձամբ ներկայ գտնուել։

մից... և ահա այդ է պատճառը որ 1908 թ. եկամուտը մոմավաճառութիւնից այնտեղ է հասել, որ տիրացուին ռանիկ վճարելու միջոց չի մնացել, ուր մնաց որ եկեղեցին իր մի քանի հարիւր ռուբլի պարտքը վճարի։

Ահա այդ հանգամանքները պատճառ եղան, որ ես 1908 թ. ապրիլի դպրոցի Տ.-Գրիգորին Մայիսից և Տ.-Զատիկին Յուլիսից իրենց ամսականները վճարելը, բացատրելով հանգերձ. „մինչև հիմա ես եմ վճարել, այսուհետև թող ծուխը կամ ժողովուրդը վճարի, արժանի էք դուք այդ պատուին թէ չէ“։

Սրանից յետոյ սկսում են զազրելի կամայականութիւնները, որ մեծ բաւականութիւն և հրճանք պատճառեց Երևանայ Կոնսիստորիային (ինչքան ես կարողացայ նկատել) քահանայի հնարագիտութիւնը և քաջագործութիւնը։

Տէր-Գրիգորը դառաւ մոմավաճառ 4-5 ամիս շարունակ (իմ բացակայութեան ժամանակ) և աչ մի միջոցաւ չկարողացայ հեռացնել մոմի սեղանից, մինչև որ պաշտօնապէս չգանգատեցի Հմայակ վարդապետ-ժամանակաւոր առաջնորդին։

Ես և եկեղեցւոյ հոգաբարձութիւնը երդեցիկ խումբ վարձեցինք, որ տօն օրերին, կիրակի օրերը, նախատօնակներին երգէր և այլն, բայց Տ.-Գրիգորը ամենախայտառակ սպառնալիքներով դուրս վռնդեց եկեղեցուց բոլորին. նոյնպէս չընդունեց մի ուրիշ տիրացուին, որին ուզում էինք վարձել։

Տիրացուին հրաւիրաթերթ էի տալ ժողով կայացնելու,—Տ.-Գրիգորը տիրացուի ձեռքից խլեց, որ ժողով չկայանայ, իսկ մենք էլ ստիպուած եղանք „Երևանայ Յայտարարութեան“ մէջ տպել տալ հրաւէրը։

Ծխականների այն մասանը, որն որ 9 տարի շարունակ մոմավաճառութեան սեղանից չէր հեռացել, այսօր դառել է Տ.-Գրիգորի սեփականութիւն. տեսնենք որ Երևանցին կհամարձակուի նրա ձեռքից առնելու. չէ որ նա

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ЕРЕВАН, Мясникяна

(1004/1941) 23644-60

յաւ չափել է թէ ժողովրդի և թէ Կոնսիստորիայի շնորհքը և իրեն էլ եկեղեցւոյ տէր է ճանաչում, չնայած որ հաստատուած էլ չէ մինչև այսօր։

Ես և հոգաբարձութիւնը բողոքեցինք թէ Կոնսիստորին և թէ Սինոդին մի քանի մարդկանց ստորագրութեամբ և թէ Տ.-Տեղակալին օրանից 4 ամիս առաջ։ Հետեանքը այն եղաւ, որ ամեն մէկը մեզանից (բողոքողներից) մի մի խայտառակ սպառնական նամակներ և ուրիշների միջոցաւ նախազգուշացումներ ստացանք Տէր-Գրիգորից, որոյ պատճառաւ հոգաբարձուներից մէկը հրաժարական տուեց։ Կոնսիստորն էլ առանց մի քննութիւն կատարելու կամ ստուգելու մեր բողոքը՝ անհետեանք թողեց և Տ.-Գրիգորին էլ մեզանից ծածուկ իւրեանց դատավճռի պատճէն տուաւ։

Ահա մեր հոգևորականների վարմունքը Սինոդից սկսած։

Բայց եթէ Երևանայ յարգելի հասարակութիւնն էլ, որի ծախսով շինուած և պայծառացրած է ս. Լուսաւորիչ եկեղեցին, միևնոյն հոգւով վերաբերուի այս հարցին և ինքը տէր չկանգնի իր եկեղեցուն, մարդաբէ հարկաւոր չէ լինել, որ գուշակենք. „ս. Լուսաւորիչ եկեղեցին կփակուի ի պատիւ և ի պարծանս Երևանցիների անտարբերութեան, և Տեղակալի, Սինոդի և Կոնսիստորի անփութութեանց“։

Թող ներուի ինձ մի փոքրիկ նկատողութիւն անել, որովհետև ինձ անհասկանալի է մնում մինչև այսօր այդ երևոյթը։ Ամեն ազգեր ունեն իւրեանց թէ կրօնական և թէ ազգային տօները. կրօնա-ազգային տօներից մէկն էլ ս. Գրիգոր Լուսաւորչայ տօնն է, որը տարեկան 3 անգամ է լինում։ Երևանում գրեթէ տարուայ բոլոր 5 մեռելոցները տօնւում են մեր վաճառականների և արհեստաւորների կողմից ամենայն շքեղութեամբ. մագաղիններ, արհեստանոցներ փակելով և այլն, մինչդեռ այնպիսի մեծ տօնն ինչպէս „ելն ի վիրապէն“ է, երբէք չի տօնւում, ինչպէս և Լու-

սաւորչայ միւս 2 ասնները։ Հետ հասկանում. մենք Երևանցիներս ս. Գ. Լուսաւորչին չենք հաւանում, թէ մեռելոցներն ենք աւելի բարձր դասում։

Երեցփոխ Երեւանայ ս. Լուսաւորիչ մայր-եկեղեցւոյ

Գ. ՊԱՊՈՎ

1-ին Մայիսի 1909 ամի։
ք. Երևան։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Ա.
ԵՐԵՎԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

797

794
0027417